

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ
THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 11.

ՖԵՆՉԵՆՈՒ ՔԱԼ. ՇԱԲԱԹ, ՀՈԿՏ. 25, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

Տիգրանի Մանուկեանի Դատը

Անցեալ Շաբաթ օր՝ կէս օրէ վերջ ժամը երեքի տեսնեցրը՝ Երզուեալ դատաւորք՝ իրենց Հրահանգները ստանալէ յետոյ առանձնացան և կէս ժամի չափ մը տածելէ յետոյ սա վճիռը բերին թէ Տիգրան Մանուկեան առաջին աստիճանի յանցաւոր էր. բայց պատիժը կը սահմանէին ցմահ բանտարկութեան՝ փոխանակ կախաղանի:

** ** ** **

Անցեալ Աբրաթ առաւօտ՝ Ռատիկեանի Հարցաքննութենէն վերջը քանի մը ուրիշ վկաներ ալ քննուեցան: Ի մէջ այլոց՝ Տքթ. Բարսեղեան վկայեց, որ նկարագրեց ամբաստանելոյն ցաւալի վիճակը՝ Ռատիկեանէ ստացած Հարուածէն անմիջապէս վերջը:

Դատախազութեան վկանները լսուելէ վերջ՝ Ռ. Թըփըր իր բացման ճառը խօսեցաւ, որով պնդեց թէ ամբաստանեալը կրակած էր սպանեալին վրայ՝ ինքզինքը պաշտպանելու համար. ուստի ինքնապաշտպանութիւնը իրեն գլխաւոր փաստը պիտի ըլլար. այս փաստին պիտի ընկերանար նաև ամբաստանեալին խելագար ըլլալու իրողութիւնը: Սա վերջի գաղափարին վրայ պնդեց փաստաբանը՝ մատնանիչ ընելով Մանուկեանի անպատասխանատու վարմունքը Ռատիկեանէ ստացած Հարուածէն յետոյ:

Պաշտպան կողմի բազմաթիւ վկաններուն մէջէն Տքթ. Մարթին ըսաւ թէ սպանութեան գիշերը՝ հրահանգութենէ անմիջապէս վերջը վրայ հասնելով՝ սպանեալին օգնելու գնացած ու անոր վերարկուին գրպանը ատրճանակ մը գտած էր, որ մասամբ կը կախուի եղեր գրպանէն դուրս: Վկան՝ հրահանգը սպանեալին նոյն գրպանը դրած ու վերարկուին կոճկած էր: Վիրաւորեալը բուական ատեն իր բարեկամներէն շըրջապատուած մնալէ յետոյ՝ երբ օտարիկանք կը խուզարկեն զայն՝ փանթալոնի ետեւի գրպանը միայն՝ հրահանգ մը կը գտնեն, որուն մէկ աչքը կրակուած է եղեր: Աբրիշ վկայ մը սպանեալին ձեռքը հրահանգ մը տեսած էր անոր ինկած ժամանակ: Պաշտպան փաստաբանք կը խորհէին թէ Ասատուր նախ կրակած էր ամբաստանելոյն վրայ ձեռքի այդ ատրճանակաւ՝ վիրաւորուելէ անմիջապէս առաջ: Եւ այս կարծիքը ճշմարտութիւն ըլլալէ հետի չէր թուէր այդ պարագաներուն ներքեւ:

Ամբաստանելոյ բարի վարուց համար վկայեցին շատեր: Յուլիս կէ առաջ՝ Ռատիկեանէ ստացած Հարուածէն վերջ՝ անոր տարօրինակ վարմունքն ու խելագարի

մը յատուկ երեւոյթն ու խօսուածքը նկարագրեցին շատեր: Այս կէտերուն մէջ Տքթ. Աղէքսանդրեան շատ կարեւոր վկայ մը հանդիսացաւ ի նպաստ Տիգրանի:

Երբ այս կողմի բոլոր վկաններու քննութիւնը աւարտեցաւ՝ Տքթ. Տքթ. Բարթ խօսիլ սկսեց: Կարող փաստաբանը ամբաստանելոյ կախաղան հանուիլը կը պահանջէր: Չանաց ի նպաստ անոր տրուած վկայութիւնները բեկանել ու խենթութեան կասկածը ի հիմանց խախտել: Երկրորդ խօսողն էր Տ. Քօքի՝ պաշտպան փաստաբաններուն մէկը, որ բոլոր խնդրոյն վրայէն անցաւ մանրամասնաբար. պնդեց թէ ամբաստանեալը առանց պատճառի մը չէր կրնար կրակած ըլլալ Ասատուրի վրայ՝ որուն հետ գործ մը չուէր. կռթնելով վկայութեանց վրայ՝ փաստաբանեց թէ սպանեալը կրակած էր առաջ՝ իր բարեկամ Ռատիկեանը պաշտպանելու համար: Տ. Քօքի մատնանիչ ըրաւ երեան եկած բոլոր կասկածները՝ որք ամբաստանեալը առաջին աստիճանի մարդասպան մը ըլլալու գաղափարը օղը կը հանէին. կոչոււմ ըրաւ ձիւրիին իրենց պարտականութիւնը կատարել՝ օրէնքի տրամադրածին համաձայն:

Շաբաթ առաւօտ Ռ. Թըփըր իր ճառը սկսեց ամբաստանելոյն կողմէն: Հռչակաւոր փաստաբանը, որ եղեռնական խնդիրներու մէջ՝ Քալիֆօրնիոյ առաջնակարգ փաստաբաններէ մին է, չէզոքացնել սկսեց դատախազութեան բոլոր կարեւոր վկանները. Խիստ կծու լեզուով յարձակեցաւ Ռատիկեանի վրայ, որ գոնէ ի դուռ չըջած, վկաներ հաւաքած ու երկու կարող փաստաբաններ վարձած էր՝ անոք ու խելագար մէկը կախաղան բարձրացնելու համար: Դիտել տուաւ թէ դատախազութեան կարեւոր վկանները նոյն Ռատիկեանի քոյրն ու ընտորդիներն էին, որոնց վկայութիւնները այնպէս մը քրքրեց ու անոնց անբնական նկարագրութիւնները մատնանիչ ըրաւ որ զայն մտիկ ընող մը չէր կրնար անոնց բոլոր վկայութեանց հաւատ ընծայել: Թըփըր օրինական շատ մը կէտեր պարզելէ ու քանի մը յարակից ու մեղմացուցիչ պարագաներ ալ ներկայացնելէ յետոյ՝ պարզեց ձիւրիին օրինաց այն տրամադրութիւնը կամ արտայայտութիւնը թէ անմեղ մէկը պատժելու չէ բնաւ՝ հոգ չէ եթէ հազար յանցաւորներ անպատիժ ազատին:

Վերջի խօսողն էր Ընդհանուր Դատախազը որ արեան տեղ արիւն կը պահանջէր: Մանրամասն կերպով խնդրոյն վրայէն անցաւ. պաշտպան կողմի քանի մը կարեւոր վկաններուն ըսածները քննադատեց ու ջրել

աշխատեցաւ, և յանուն հասարակաց ապահովութեան ինդրեց ճիւղիէն դատապարտել ամբաստանեալը պատիժներու մեծագունին:

Ընդհանուր Դատախազէն վերջ Դատաւոր Օսթըն իր հրահանգները տալ սկսեց: Պաղարիւնութեամբ բացատրեց այն ամեն կէտերն ու օրէնքները որք ու է կերպով կրնային կապակցութիւն ունենալ այս ինդրին հետ: Մարդասպանութեան աստիճաններն ալ սահմանել վերջ՝ ամբաստանելոյն բաղդն ու կեանքը յանձնեց ճիւղիին՝ "տաներիու բարի և ուղիւ մարդոց":

Եւ ճիւղին առանձնացաւ: Մանուկեանի կենաց ու մահու ըրպէսներն էին: Խուռն բազմութիւնը, որ ունկնդիր եղած էր այս դատին, մատամբ ցրուեցաւ՝ կարծելով թէ ճիւղին կարճ ժամանակէն չի պիտի կրնար համաձայնութեան մը հանգիլ: Բայց այդպէս չեղաւ. Իբր քառորդ ժամ վերջը լուր բերուեցաւ թէ երգուեալները պատրաստ էին իրենց վճիռը բերել: Լուծիւն մը տիրեց: Ներկայք անհամբերութեան հաւաքական պատկեր մը կը ներկայացնէին: Ամբաստանեալը դեռ անզիտակից անց ու դարձին՝ կը ժպտէր իր բարեկամաց: Դատեր տփուռեցան, ոմանց աչքերէն արտասուք վազեց, և բացի քանի մը անձերէ՝ ուրիշ ամեն ոք ցաւ ու պշգանք զգաց՝ տարօրինակ որոշումը լսելով:

Արդարութիւն գործուած չէր. Տիգրան Մանուկեան իր յանցանքի չափով չէր որ կը պատժուէր՝ թերևս աղքատ և թերևս հայ մը եղած ըլլալուն համար:

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐՆԵՐ

— 0 —

Երեք երկար տարիներ յուսալէ և երազելէ վերջ՝ Յրէզնոյի ժողովուրդն ալ իր ելեքարական կառքերը ունեցաւ վերջապէս, ու իր նահապետական թրամուէյն ու անոր մաշած ձիերը զրկեց՝ անվրդով հանգիստ մը առնել: Անցեալ Կիրակի կէսօրին՝ պաշտօնական հանդիսաւոր բացումէ մը վերջ՝ ելեքարակառքերը սկսեցին քալել՝ յատուկ ընկերութեան տարբեր գծերու մէկին վրայ միայն որոյ շինութիւնը լրացած էր վերջերս: Սա գծին կառքերը՝ առաւօտեան ժամը վեցէն սկսեալ մինչև երեկոյեան տասը՝ ամեն տասը րոպէին անգամ մը ճամբայ պիտի երնեն Սըտրըն Փըսիֆիքի կայարանին առջևէն և պիտի անցնին Թուլարի, Ճէյ, Ծօրթքէմը, Ըսթանիսլաւ, Մօնօ, Պլաքըսթըն, Փի, Ար և Վէնթուրա փողոցները, և փոխադարձաբար: Ծամբորդութեան գինը պիտի ըլլայ՝ ըստ սովորականին՝ հինգ սէնթ միայն: Կառքերը Սան Յրանսիակոյի մէջ գործածուածներու տեսակէն են, և առ այժմ թուով 8 միայն: Ընկերութեան միւս ելեքարագիծները, որք կառուցուելու վրայ են այժմ, կըսուի թէ քիչ ատենէն կը լրանան ու գործածուելու զրկեց մէջ կը զրուին:

Յրէզնօն մեծ քաղաքի մը մանրանկար պատկերը ներկայացնել սկսած է այժմ:

— Գաղթային Պաշտօնէութեան հրատարակած վերջի տարեկան տեղեկագիրը կը ծանուցանէ թէ՛ վերջի տասն և երկու ամիսներուն մէջ Միացեալ Նահանգները գաղթած են 647,073 գաղթականներ: Ասոնց

179,379ը տուած է Իտալիա. Աւստրիայէն եկած են 171,989 անձինք. Իռլանտայէն՝ 29,138 գաղթական. Իսկ մնացեալք ասորբեր երկիրներէ եկած են: Ասիական գաղթականաց մէջ յիշուած են Չինաստանցիք և Ճարոնացիք: Առաջինները տուած են 1,640 գաղթականներ, իսկ վերջինք՝ 14,270: Բոլոր գաղթականաց մէջ 167,188 անձինք գրել կարողաւ անտեղեակ են՝ եզեր: 4795 անձինք ետ շրկուած են զանազան պատճառներու համար:

— Սահակ Վարդապետ Նազարեթեան՝ Սբ. Երրորդութիւն Եկեղեցւոյ երկու կողմի անցքերը (սայտ ուօք) շինելու, Եկեղեցւոյ բոլորաթիքը զաւարով պատելու, ջրհան մը հաստատելու, Եկեղեցւոյ մէջը ծանր գոյն թուղթով ծածկելու և ուրիշ քանի մը կարևոր փոփոխութիւններ ընելու համար հանգանակութիւն մը բացաւ քաղաքիս Հայոց մէջ: Այս հանգանակութեան առաջին մասնակցողը եղած է Պ Ս. Մինասեան որ խոստացած է 50 տոլար տալ՝ առաջարկեալ գործի աւարտումէն վերջը վճարելու պայմանաւ:

— Ածուխի բանուորներուն ծանօթ գործադուրը լմնցաւ վերջապէս: Ներքին ու արտաքին ազդեցութիւններու շնորհիւ՝ որոշուեցաւ ինդիլը Նախագահին կողմէն կարգուած հաշտարար մասնախմբի մը յանձնել: Գործաւորք աշխատելու սկսած կըլլան Հիմայ:

— Քաղաքիս գործադուրն ալ վերջացաւ շարթուս մէջ: Գործաւորք կը խորհին թէ յաղթանակը իրենց կողմը մնացած էր բոլորովին. իսկ իրողութիւնը սա է թէ երկու կողմն ալ իր բաժինը ունեցած է այս յաղթութեան մէջ:

— Խօսք կը շրջի թէ Սըտրըն Փըսիֆիք երկաթուղեաց ընկերութեան աշխատաւորք՝ երեսուն հազարի չափ մարդիկ՝ յաւելում մը պիտի պահանջեն իրենց ամսականներուն վրայ, և եթէ մերժուին՝ գործադուր պիտի ընեն:

*** Այս երեկոյ ժամը ութին Քըթնըր Հօլի մէջ տեղի ունենալիք հանդէսն ու ժողովը տեսնելու և խօսողները լսելու ես անշուշտ: **

— Յրէզնոյի առաջին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ շինութեան ել և մտից հաշուեցուցակէն, որ հրատարակուեցաւ շարթուս մէջ առանձին տետրակով մը, կը հասկնանք թէ նոյն եկեղեցւոյ շինութեան համար ցարդ ծախսուած է 8541 տոլար և 53 սէնթ. ասոր 3500ը դրամատունէն փոխ առնուած է: Գանձին մէջ կայ այժմ 325 տոլար պատրաստ գրամ: Իսկ ապառիկները կը համին 1636 տոլար և 45 սէնթի: Եկեղեցին աւարտած չէ տակաւին, և կըսուի թէ դեռ քանի մը հաղարներու պէտք կայ՝ զայն աւարտել կարենալու համար:

— Երէկ Նիւ Եորքէն քաղաքս եկաւ՝ հոս հաստատուելու նպատակով՝ Ս. Պէտրոսեան իր ընտանեօք ու զաւակներով միասին:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Ամեն Կիրակի օրեր ժամերգութիւնը կըսկսին առաւօտեան ժամը 9.30ին: Քարոզի ժամն 11.

Երեկոյեան դասը՝ 4էս օրէ վերջ ժամը 3ին:

ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեզի հետ գործ ունեցող ու է Հայու հարցուր և տես թէ մեզմէ գոհ եղած չէ: Մենք Հայոց աւելի շատ կալուած կը ծախենք քան միւս բոլոր գործա- կճութիւնք ի միասին առնելով: Եկ և մեր ունեցած Այգիներու, Ծառաստաններու և ուրիշ ամեն տեսակ կալուածներու գները լսէ:

Մօր Եւ Նիս

1150 Ա Փողոց. Ֆրէզնօ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՎՅՈՒՄ

Ազգային Հոգաբարձութեան խնդրանք՝ յառաջի- կայ Նոյեմբեր 9ի Կիրակի օրը, կէս օրէ վերջ, ժամը երկուքին Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Ընդհանուր Ժողովը արտաքոյ կարգի նիստ պիտի ունենայ նոյն Եկեղեցւոյ մէջ՝ կարգ մը կարևոր խնդիրներ լուծելու համար: Ի մէջ այլոց ժողովին պիտի ներկայանայ Առաջնորդի ընտրութեան առկախ խնդիրը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ լինիլ ան- հրաժեշտ այս կարևոր ժողովին:

Ի Դիմաց Ընդհ. Ժող. Ս. Երր. Եկեղեցւոյ Ատենադպիր Մ. Արէմեան

Յ. Գ. Ամեն անոնք որք տակաւին ստորագրած չեն Եկեղեցւոյ կանոնադրը, կը հրաւիրուին ընդ փոյթ ստորագրել զայն՝ որպէսզի ձայն ու քուէ ունենան ներկայ կարևոր խնդիրներու մէջ:

Ֆրէզնօ, Հոկ. 2 1902

ՀԱՅ ԵՐԻՅԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Ճէյ և Սանթաքլարա փողոցներուն անկիւնը: Ամեն Կիրակի առտու ժամը 10ին Կիրակնօրեայ զպրոց և կեսօրէ ետքը ժամը 3ին Հայերեն քարոզ կը ւնայ:

ՄԷԹՐԱՓՕԼԻԹԸՆ

ԿԵՆԱՅ ՍՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ Կ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, Գործկ. Լօն էնտ Սէյվինկ Պէնք Պիլաինկ. Սենեակ, 14 և 15 Փ. Օ. Պաքս, 1285: Թէլեֆօն, պլու 216

Անոնք որ իրենց գաւակաց ու ընտանեաց վրայ սէր ունին՝ պէտք է որ կեանքերին գոնէ 1000 առարի ա- պահովագրեն: Ոմանք կը խորհին թէ տարին 35 տո- լար ապահովագրութեան համար վճարելը աւելորդ մի ծանխք է, բայց գիտնալու է թէ 35 տոլարով գրամա- տան մը մէջ հազար տոլար ապահոված կըլլան ապա- գայ անձրևոտ օրերու համար: Պղտիկներու կեանքը անպահովագրելու համար եթէ մէկը շարաթը տասը սէնթ տայ՝ քսան տարի վերջ 100 տոլարը ետ կառնէ: Լաւ չէ՞ այս: Նորէն պիտի գրենք յաջորդիւ:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

Լուտեր կըսէ թէ աշխարհս բարի կնոջ մը սրտին պէս կամ անոր շափ փափուկ բան չունի:

—Մարդու մը իրական արժանիքը կարելի չէ գիտ- նալ՝ անոր ինչ ունեցած կամ ինչ ըրած ըլլալովն մի- այն: Մարդու մը իրական արժանիքը կը հասկցուի ա- նոր ինչ ըլլալը միայն:

—Ճշմարիտ եղիր: Կենաց բարձրագոյն նպատակն է այն. առաքինութեան գաղտնիքն է նմանապէս:

—Ամեն անհատի կամ խմբի մէջ գաղտնիք մը կայ՝ կապ մը զոր վրդովելու չէ երբեք: Այս կենսական պա- պը զաւկի մը իր ծնողաց հետ ունեցած յարաբերու- թեանց մէջ յարգանքն է, բարեկամութեան մէջ՝ պա- տիւ, ամուսնութեան մէջ՝ հաւատարմութիւն, կրօնա- կան կեանքի մէջ՝ հաւատք: Այս կէտերը անձեռնմը- խելի մնալու են խօսքի մէջ, որովհետև անոնց դպիրը՝ անոնց դէմ հայհոյել կը նշանակէ:

—Մարդկութեան համար ամենէ մեծ սկզբունքը ար- դարութիւնն է: Արդարութիւն գէպ ի տկարը կը նը- շանակէ պաշտպանութիւն և գորով:

—Սորվեցնելու մեծ գաղտնիքը կը կայանայ թելա- դրել գիտնալու մէջ: Այդ սորվելու համար գիտնալու ենք թէ ինչ կը հետաքրքրէ աշակերտը: Պէտք է սորվինք մանկան միտքը և հոգին կարգալ այնպէս՝ ինչպէս որ գիրք մը կը կարգանք ու կը հասկնանք:

—Ինչպէս որ ամեն գետի ծայրը ծով մը կայ՝ այնպէս ալ ամեն բանի վերջը մեղամաղձոտութիւն է այս աշխարհի վրայ: Կրնա՞ր սակայն ուրիշ կերպ մը ըլլալ՝ քանի որ մեր սիրածները պիտի մեռնին անպատճառ: Եւ ուստի մահը չէ՞ արգեօք կեանքին գաղտնիքը որ կը փնտռենք միշտ: Յաւիտենական սուգի մը տխրութիւնը կը շրջապատէ լուրջ ու մտածող հոգին՝ ինչպէս որ մու- թը կը շրջապատէ աշխարհը՝ գիշեր ժամանակ:

—Վայրի կենդանիներու կրթիչ մը ըլլալու է մարդս: Այդ վայրի կենդանիները իրեն անկիրթ բնաւորու- թիւններն են: Անոնց ակոսները քաշել, սանձել ու ընտանի օգտակար կենդանիներ ընել զանոնք՝ իրեն աւագ պարասկանութիւնն է միշտ:

—Եթէ հիւանդ ես՝ քենէ աւելի հիւանդ եղողի մը վրայ մտածէ որ մխիթարուիս:

- * * * * *
- Փաստարանը — Անունդ ի՞նչ է.
- Վկան — Աւետիս է անունս:
- Փ. — Աւետիս, դու կարգուած ես:
- Վ. — Կարծեմ թէ. այո՞, կարգուած եմ:
- Փ. — Ըսէ տեսնենք որո՞ւ հետ կարգուած ես:
- Վ. — Որո՞ւ կարգուած եմ. անշուշտ կնկան մը հետ:
- Փ. — Հոս նայէ, դատարանի մէջ կատակ չըլլար. պէտք է լուրջ պատասխան տաս: Տարակոյս չի կայ թէ աղջկան մը կամ կնկան մը հետ ամուսնացած ես. գիտես մէկը որ երկի մարդու մը հետ կարգած ըլլայ:
- Վ. — Այո, գիտեմ մէկը, Պ. Փաստարան, իմ քոյրս:

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

ՃէՑ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԻՄՔԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար
Տարեկան մէկ ու կէս \$1. — Վեցամսեայ 75 Սէնթ
Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ
Բաժանորդագիրը Կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը զրկուին Խմբագրու-
թեան հետեւեալ հասցէի:

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՉՆՕ, ԲԱԼԻՖՕՐՆԻԱ. ՀՈԿՏ. 25, 1902

ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԴԱՏԸ

—0—

Տիգրան Մանուկեանի դատը շատ տխուր կերպով վերջացաւ: Թէև զայն կախաղան բարձրացնելու տենչով վառող մեր ազգայինները յուսախար եղան, բայց այսու հանդերձ ամբաստանեալը ոչ նուազ ծանր դատապարտութիւն մը կրեց: Մանուկեան յանցաւոր էր անշուշտ: Ոչ ոք կրնայ ուրանալ այս ճշմարտութիւնը. բայց անոր դէմ արձակուած վճիռը իւր յանցանքին հետ չի կրնար ուղիղ համեմատութիւն ունենալ՝ օրինաց տրամադրութեան համաձայն, անանկ որ իրաւունք կունենանք մտածել թէ զրամն էր՝ և հայ զրամն էր որ այդ ծանր վճիռը արձակել տուաւ. և թերևս ամերիկացւոց ոմանց մէջ տիրող հակա-հայկական նախապաշարումն ալ իւր տխուր դերը կատարեց այս կենսական խնդրոյն մէջ: Հասարակաց գաղափարը՝ ինչպէս նաև օրէսնգէտներու կարծիքը հակառակ է տըրուած որոշման: Եւ արդարև ոչ ոք այսօրինակ ծանր վճիռ մը կըսպասէր՝ հակառակ տրուած վկայութեանց: Արդարութիւն չէ սակայն արդարութեան այս երկրին մէջ թող տալ որ մէկը իր յանցանքէն ծանր պատիժ մը կըրէ: Անտարբերութիւնը նախատինք մ'է այս մասին՝ մանաւանդ հայ գաղթականութեան համար:

Արդ՝ պէտք է որ Գատապարտեալը կրկին անգամ դատուի. և մանաւանդ որ երկու շատ կարևոր նոր վկաներ երևան եկած են՝ իրենց տեսածները զալպատմելու յօժար: Ասոնց զիտցածները Գատախաղութեան հիւսած փաստերու տկար շղթայն շարգակտուր խոր-

տակելու բնութիւնն ունին

Սակայն նոր դատ մը պահանջելու կամ վճարելի Ատենին դիմելու համար դրամի պէտք կայ: Գատապարտեալը ոչ միայ աղքատ է՝ այլ մտերիմներ կամ ազգականներ ալ չունի հոս: Հասարակութիւնը պարտական է անօգնականին պաշտպանութիւնը ստանձնել: Այն անհատի վրայ պարտք մը կը ծանրանայ օգնութիւն մը ընել՝ արդարութեան սիրոյն համար, այս անօգնական երիտասարդին:

Իսկ Յարութիւն Ռատիկեան, որ այս բոլոր չարեաց պատճառ եղող անձն է, և որուն վրայ կը ծանրանայ բարոյապէս՝ Տէր Միքայէլեանի անմեղ արիւնը ու բոլոր յարակից դժբաղդութեանց պատասխանատուութիւնը, փոխանակ իր վերջի ընթացքով հասարակաց գայրութիւնը զրգուելու իրեն դէմ՝ պարտէր անկողմնակալութիւն ցոյց տալ, ու կարելի եղած միջոցներով գէթ մասամբ իր մահացու յանցանքները դարմանել: Եւ եթէ ցարդ մեր այս հայրենակիցը չէ կրցած դատապարտելի վրէժինդրութեան մը ձայնը լռեցնել իր մէջ՝ գէթ ջանալու է այսուհետև ականջ դնել արդարութեան ձայնին, որ՝ տարակոյս չունինք թէ անդադար կը բողբէ իրեն դէմ ու կը պատկերացնէ այն ահուկի տեսարանը ուր երկու անցինք արիւններու մէջ կը թաւալին, և ուրիշ մը բանտի սև կամարներուն տակ փրտտելու կը դատապարտուի: Եւ այս ամենը կը պատահին՝ որովհետև Յ. Ռատիկեան ամիսներ առաջ յանիւրաւի կը վնասէ ծանրապէս այսօրուան դատապարտեալը. կը հեղձէ զայն, կը ծիծաղի անոր վրայ, և հակառակ բարեկամներու և Սզգային Հոգարարձութեան թախանձանաց՝ չի զիջանիր անկէ ներողութիւն անգամ խնդրել. որովհետև Մանուկեան աղքատ գործաւոր մը ըլլալով՝ "ՇՈՒՆԻ ՄԸ ԱՐԺԷՔԸ" անգամ չունի եղեր իրեն քով . . . :

Պէտք է որ Մանուկեան կրկին անգամ դատուի:

Թերրի մը Պարտակասնուշիւնը

—0—

Չի կայ պաշտօն մը որ սահմանուած ըլլայ հանրութեան օգտին՝ բարոյականին, զարգացման կամ ապահովութեան համար՝ որուն մէջ մամուլը իւր յատուկ դերը ունեցած չըլլայ: Ուրիշ խօսքով՝ րազիրը այս բոլոր պաշտօններուն տեսակ մը հաւաքումն կամ միացումն է, որ իր հրատարակչաց կամ խմբագրութեան բարոյական զօրութեան չափով կրնայ իր պաշտօնը կատարել:

Մեր նպատակը չէ սակայն այս յօդուածով թերթի մը բոլոր պարտականութիւնները սահմանել, այլ պիտի աշխատինք՝ քանի մը խօսքերով՝ անոր մեծ կոչման բարոյական մէկ կողմը միայն ներկայացնել՝ ցոյց տալու համար թէ իր այս կոչման հիմնովին հակառակը գործող թերթ մը արժանի է ժողովրդի ցասման ու դատապարտութեան:

Արդ՝ րազիրը նկատուած է հասարակաց բարոյականին ու ընտանեկան սրբութեան պաշտպանը կամ գաղտնի ոստիկանը, որ կոչում ունի հսկել անոր վը-

րայ, զայն վտանգել ուղող չարագործը հանրային արգարութեան դատարանին առջև բերել՝ դատելու ու պատժել տալու համար: Կարող ու արժանաւոր ձեռքերու մէջ այս պատասխանատու պաշտօնը օրհնութիւն մ'է հասարակութեան համար՝ պատնէշ մը անբարոյականութեան դէմ. իսկ եթէ տկար նկարագրի տէր մարդիկ այսպիսի պաշտօնի մը գլուխը անցնին՝ ոչ միայն կը քաջալերեն սրբապղծութեան հրէշները՝ այլ իրենք կը վտանգեն ընդհանրութեան բարոյականը, ու ընտանեկան սրբութիւնը պաշտպանող պարիսպերը կը քանդեն անձամբ:

Քաղաքական կեանքի մէջ ոստիկան մը ինքնակոչ չի կրնար ըլլալ: Վերին իշխանութիւն մը կայ որ մեծ խնամով ընտրութիւն կընէ. և եթէ ընտրեալ պաշտօնեայ մը իր պաշտօնին մէջ թերանայ՝ նոյն իշխանութիւնը իրաւունք ունի անմիջապէս պաշտօնագրի ընել այնպիսին, կամ ուրիշի մը հսկողութեան ենթարկել զայն: Քաղաքական կեանքի մէջ դարձեալ՝ հասարակաց անդորրութեան պահպանները եթէ՝ փոխանակ իրենց պարտականութիւնը կատարելու՝ խռովութիւններ սփռեն իրենց շուրջը՝ կենթարկուին այնպիսի պատիժներու որոնք՝ նոյնօրինակ սովորական յանցաւորի մը համար կրնան շատ ծանր նկատուիլ, վասն զի պաշտօնեայի մը յանցանքը պարզ քաղաքացիի մը յանցանքին հետ ուղիղ համեմատութիւն չի կրնար ունենալ միշտ: Եւ եթէ երկրի մը իշխանութիւնը թող տայ որ խռովայոյզ ու վտանգաւոր ոստիկաններ իր ժողովրդին անդորրութեան հսկող պաշտօնեաներ մեան՝ մարդիկ իրաւունք կուրենան կրկնել այն ծանօթ խօսքը որ մեր մանկութեան օրերէն ի վեր սորված ենք թէ "վա՛յ քեզ քաղաք որ թագաւորը մանուկ է":


Սակայն այս խնդրոյս բարոյական կողմը տարբեր կերպով սահմանուած է: Ժողովրդին ուղղակի իրաւունք տրուած չէ իր բարոյական ոստիկանները ընտրել: Ամեն անհատ որ կարող է քիչ շատ մելան լլզել՝ իրաւունք ունի ժողովրդի բարոյականին ինքնակոչ պաշտպանը դառնալ: Երբ այս ինքնակոչներ հասարակաց բարոյականն ու ընտանեկան յարկի սրբութիւնը պղծեն՝ չի կայ վերին իշխանութիւն մը, մանաւանդ այս երկրի մէջ ուր ազատ է մամուլը, որ կարողանայ պրկել անոնց լեզուն և ենթարկել զիրենք անմիջական արժանաւոր պատժի մը:

Սակայն կայ հասարակաց գաղափարն ու ժողովրդական անողոք գատավճիռը այսօրինակ պարագաներու մէջ: Եթէ սա՝ անմիջական արգիւնք մը յառաջ չի բերեր, բայց անոր ազդեցութիւնը շատ խորունկ՝ և ամեն գիտցուած պատիժներէ ծանր ու տևական կըլլայ՝ պատուաւոր մարդու մը համար:

Այսօրինակ ծանր գատավճիռ մը տրուեցաւ վերջերս Պոսթընի Հայրենիք լրագրին դէմ, որուն գործածած անասելի լեզուն Հայ իգական սեռի ու ընտանեկան սրբութեան դէմ՝ հայ գաղթականութիւնը արգար զայրոյթով լեցուց Մէյնէն մինչև Քալիֆորնիա:

Հայրենիք հայ ընտանեկան սրբութեան ու բարոյականին դէմ ոճիւր գործած էր . . . :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՓՈԹՈՐԻԿ ՄԸ



Պուխարէսթէն քաշուած հեռագիր մը կըսէ թէ Ռուսիոյ Նիքօլա մեծ Դուքսը՝ վերջերս Պօլիս այցելած միջոցին պահանջած է Բ. Դոնէն՝ Իւքիւր Իսթէլսիի դաշնագրութիւնը վերանորոգել դարձեալ. և ասկէ զատ՝ զայն աւելի զօրաւոր ընելու համար՝ նորանոր յօդուածներ աւելցնել անոր վրայ:


Իւքիւր Իսթէլսիի դաշնագրութիւնը կնքուած է 1833ին, որով Թուրքիա կը խոստանայ՝ պատերազմի ժամանակ Տարտանէլի անցքը գոցել օտար զրահաւորներու առջև՝ երբ Ռուսիա այդպէս պահանջէ: Ասոր փոխարէն Ռուսիա կը խոստանայ՝ ծովի ու ցամաքի վրայ օգնել Թուրքիոյ՝ երբ այս վերջինս Չարի Կառավարութեան օգնութիւնը խնդրէ: Այս դաշնագրութիւնը ութը տարի միայն զօրութիւն ունեցած է երկու զրացի կառավարութեանց միջև, իսկ անկէ վերջ չէ կրցած նորոգուիլ՝ միւս տէրութեանց կողմէն յարուցուած հակառակութիւններուն պատճառաւ:

Նոյն հեռագիրը կըսէ նաև թէ Ռուսիա մտադիր է պնդել իր ներկայ առաջարկին վրայ, իսկ Սուլթանի կառավարութիւնը մեծ մտահոգութեան մէջ է այս մասին: Ի հարկէ աւելորդ չէ ըսել թէ խնդրոյ առարկայ եղող դաշնագրութիւնը եթէ զօրութիւն ունենայ՝ Թուրքիան կենթարկուի Ռուսիոյ քմահաճոյքին, ու անոր գերիշխանութեան ներքև անջատ իշխանութիւն մը մնայ ասկից վերջ: Սակայն խնդիր է թէ Եւրոպական կառավարութիւնք՝ մանաւանդ Անգլիա, Գերմանիա և Աւստրիա թող պիտի տա՞ն որ Ռուսիա այսպիսի սպառնալից գերիշխանութիւն մը ձեռք բերէ Տարտանէլի վրայ, ու Միջերկրականի բանալիները ունենայ իր ձեռաց մէջ: Մեծ անհաւանականութիւն մ'է այդ: Տարտանէլին անցքը կառավարող օրէնք մը կամ դաշնագրութիւն մը կարելի չէ խաղաղութեամբ կնքել՝ առանց Եւրոպական միւս տէրութիւններու հաճութեան, վասն զի այդ անցքը անոնց ամենու շահերուն հետ կապ ունեցող փափուկ խնդիր մ'է ինքնին:

Եթէ այս լուրը քաղաքական անհիմն շնկոց մը չէ՝ մեծ փոթորիկի մը անկասկածելի նշանը կրնայ սեպուիլ: Եւ ո՞վ մեզմէ չուզեր ու չերագբեր Թուրքը այսպիսի սպառնալից փոթորիկի մը բռնուած տեսնել:

*** Կը թելադրենք որ այս երեկոյեան ժողովը չըլլայ որ մոռնաս: Եկուր ու բարեկամներդ ալ բեր: ***

ՓՕԼ ՀԸՆԶ



Փօլ Հընչ ծնած է ի Գերմանիայ, և երեք տարեկան հասակին մէջ Ամերիկայ գաղթած է: Իր մայրենի երկրին մէջ կրթութիւն առնելու համար՝ Գերմանիա զրկուած է նորէն. ուր ընթացաւարտ ըլլալէ յետոյ՝ վերագարձած է Ամերիկայ, ու 14 տարի առաջ հաստատուած է Ֆրէզնօ: Հոս՝ Հընչ վարած է առաջին զրագրի պաշտօնը Լուի Սոյնլսթայն ընկերութեան:

քով երկար ժամանակ, և Հիմայ նոյն պաշտօնը կը վարէ քաղաքիս Կաս Քրմբնիի քով մեծ յաջողութեամբ: Հաշուական գործերու մէջ իւր ունեցած մեծ հմտութիւնը և Ֆրէզնոյի մէջ վայելած համբաւը զինքը արժանի կընեն 'Օտիթըր' ըլլալու պաշտօնին, որուն համար ընտրելի է Ռամկավարականաց կողմէն:

Հանրապետականք մեծ ջանք կընեն այս մարդուս շնորոկելուն՝ մասնաւորապէս Գերմանացի մը եղած ըլլալուն համար, վասն զի պահպանողական կուսակցութիւնը հակառակութիւն ունի ընդհանրապէս օտարականներուն դէմ: Հայք փորձառու են այս մասին: Եւ բնաւ տարակոյս չի կայ թէ հանրապետականք նոյնը պիտի ընեն հայու մը՝ եթէ երբէք օրին մէկը հայ ընտրելի մը երևան բերուի ազատականաց կողմէն: Հանրապետականք օտարական ընտրելի մը կարելի չէ որ ունենան: Սա իրողութիւնները գիտնալով Հայք իրենց քուէն չի՛ պիտի ուզեն բաղդակից օտարականի մը տալ:

Ո շ շ ա դ ր ո շ ր ի շ Ն

— 0 —

Մեր յաճախորդներէ շատեր կը տրտնջան թէ իրենց ապագանքները ստանալու համար յատուկ մէկը չենք զրկեր իրենց, և թէ այս անպատեհութիւնը միայն կըստիպէ զիրենք ուրիշ տուններու հետ առևտուր ընել: Այս տրտնջը բաւական և նոր յաճախորդներ ունենալու նպատակաւ՝ աակէ վերջ մտադիր ենք շարքը քսնի մը անգամներ՝ յատուկ կառքով մէկը զրկել ամեն անոնց տունները որոնք կանխաւ հաճին փափաք յայտնել այս մասին: Շատ կարևոր է այսպիսիներէ բնւ անձամբ կամ երկտողով մը, և կը յուսանք որ մեր բարեկամք կը կատարեն այս խնդիր՝ վստահ ըլլալով թէ գոհացում կու տանք իրենց կատարելապէս:

Կը փափաքինք ծանուցանել նաև թէ ամեն անոնք որք կառք (պրկի) գնելու նպատակ ունին՝ գնելէ առաջ անգամ մը մեզ գալով կրնան օգտուիլ: Այն արևելեան մեծ տունը որ կը ներկայացնենք այժմ, կառք շինող համբաւաւոր ընկերութիւն մ'է՛ որուն ապրանքաց տեսակին ու շափաւոր գներուն դէմ ոչ ոք կարող է յաջողութեամբ մրցիլ: Մեանք յարգանքօք.

Մ. Մ. ՆՇԻԿԵԱՆ,

Նպարավաճառ.

1730 Թուարի փողոց, Ֆրէզնօ. Թէլեֆօն, Ուայթ 486
Հիւղ Հօթէլի Շէնքին մէջ:

Ընտիր կերակոշքի հասար գևա

ՍԻԹԻ ՊԷՅԲԸՐԻՆ

— ձ. Մ. Քօհլըր և Փիքֆօրթ, Ճաշարանատարք —

1138 ԱՅ Ըթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

ԾԱՆՈՒՅՈՒՄ ՉԱՄԻՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԳԵՊԱՆՆԵՐՈՒՆ

— 0 —

Ընկերութեան պատկանող այգեպանները հետևեալ կանխավճարները պիտի ստանան.

Խմփէրել քլաթըր,	փաւնտին	5	սէնթ
Տիհէշա քլաթըր	"	5	սէնթ
Ֆէնսի քլաթըր	"	5	սէնթ
3 քրաւն Լընտըն լէյըր	"	4	սէնթ
2 քրաւն Լընտըն լէյըր	"	4	սէնթ
4 քրաւն ըսթանտըրա	"	3	և կէս սէնթ
3 քրաւն ըսթանտըրա	"	3	սէնթ
2 քրաւն ըսթանտըրա	"	2	և կէս սէնթ
Սիալէս մաքթ. ըսթնարթ	"	2	և կէս սէնթ
Սիալէս սըլթանաս	"	2	և երեք չորրորդ սթ.

Քալիֆ. Րէյզին Կրօւըր Ասսօսիէշըն

Ա. Լ. ՍԷՅԸՐ, Ատենադպիր

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՒՅԻՒՄ 'ՔԱՂԱՔԱՅԻՒՄ'

— 0 —

Միտըլպօրօ, Մասս.	—	—	Պ. Միքայէլեան
Ուայթինսվիլ,	'	—	Հ. Նիկողոսեան
Ուէսթ Հոպքըն, Ն.	ձէրդի	—	Հ. Մազուհեան
Պրայթըն, Մասս.	—	—	Գ. Վարդանեան
Պօսթըն, Մասս.	—	Սիրականեան և Դանիէլեան	
Սէլիմ,	'	—	Ա. Թաշճեան
Սըմիթ, Նիւ ձէրդի	—	—	Ս. Հացագործեան
Հէվըրլ, Մասս.	—	—	Մ. Կարօ
Սէնթըրլ Զօլս, Մասս.	—	—	Նշան Մինասեան

ՍԱՆԹԱ ՖԻ

** ԵՐԿԱՅՈՒՂԻՆԵՐՈՒ ԼԱԻԱԳՈՅՆ ԳԻԾԸ **

Ճամբորդին համար ամեն հանգիստ և զիւրութիւն

— 0 —

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը, կարծու ամենէ արագն է՝ արևելք երթալու կամ արևելքէ հոս գալու համար:

Ուղղակի շոգենաւային և երկաթուղիի տոմսեր Հին Աշխարհի ամեն կողմերուն և ամեն կողմերէն գալու համար: Տոմսի դրամները կրնան հոս վճարուիլ. եթէ տոմսերը չի գործածուին՝ դրամը ետ կը տրուի: Սան Ֆրանսիսկօ երթալու լաւագոյն ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը տրուին թէ՛ կայարանը և թէ՛ քաղաքիս գրասենեակը՝ ի թիւ 1031 ձէյ փողոց, Ֆրէզնօ: Թ. Ա. ձՕՆՍ, Գրծկ.



Ս Ա Ն Թ Ա Ֆ Ի

Երկարուղեաց Ընկերուշքիւն

Ֆ Ր Է Ջ Ն Օ

Ը Ն Տ Ը Ր Թ Է Յ Ք Ի Ն Կ Փ Ա Ր Լ Ը Ր Ս

ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, ՏԵՐԵՐ

1154 ձէյ փողոց, — Ֆրէզնօ. — Թէլէֆօն Մէյն 160

GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ձէյ փողոց, — Ֆրէզնօ Պլաթ — Ֆրէզնօ.

Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղաատարար ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահացնէք դուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ձՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ:

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

Sorushy Pashlianun Lnk.

Ֆրէզնօ և ԱՅ փողոցներու անկիւնը

Ֆ Ր Է Ջ Ն Օ

Լ Ը Մ Պ Ը Ր Ք Ը Մ Բ Ը Ն Ի

Գ Ր Ա Ս Ե Ն Ե Ա Կ ՈՒ Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ե Ղ Ի Ն

ԱՅ Ա Վ Է Ն Թ ՈՒ Բ Ա Փ Ո Ղ Ո Ց Ն Ե Ր ՈՒ Ա Ն Կ Ի Ի Ն Ը

Թէլէֆօն — — — Մէյն 24

ՖՐԷՋՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ.

Ս Ը Թ Ր Ը Ն Փ Ը Ս Ի Ֆ Ի Բ Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Եթէ թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունիս, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլուր երթայ, թիքէթի համար դիմէ Սըթըըն Փըսիֆիք ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու է մէկ կէտին համար տամ կը վաճառէ միևնայն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար դիմել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍՐՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ
Տիվիթըն Փասինճըր Էյճընթ: Սիթի Թիքէթ Էյճընթ
Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ձէյ փողոց,
Նոր Փաթըրսըն Պլաթին առջև

ԿԸ ՅԱՆՁՆԱՐՍՐԵՆՔ

Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԿԱՌՔԵՐՈՒ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ

Հարնէս, Մարակ և Ծածկոցներ: Այս գաշտի մէջ
ամենաաժան և ընդարձակ վաճառատունը

1817—1819 Թուլարի փողոց, Փօսթ Օֆիսին դիմացը:

Ճ. Մ. Սերրբեան, Ճ. Պաննըր, Յ. Մ. Սերրբեան

Սան Ռոքին Վալի Լմնս Քօ,

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.

Հ Ա Ս Ս Ա Տ ՈՒ Ն Կ Ա Լ ՈՒ Ա Ծ ԵՒ Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Թիւ 954 ԱՅ փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա:

Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ սպառողական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

DR. GAZARIAN DENTIST

Տրթ. Յ. Ղազարեան,

Ա Տ Ա Մ Ն Ա Գ Ո Ր Ծ ԵՒ Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ
Չանս Պլաթ, ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

Գոհացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գոհացում Յաճախորդներուն: Գիները միշտ չափաւոր:

Թէլէֆօն — — — — Ուայթ 231

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենաբարձր գին կը վճարեն

Թ Ո Ւ Ջ Ի , Դ Ե Ղ Ջ Ի ՈՒ Ա Մ Ե Ն Տ Ե Ս Ա Կ
Չ Ո Ր Պ Տ ՈՒ Ղ Ն Ե Ր ՈՒ :

ՖՐԷՋՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՖԱՔԹԸՐԻ

*** Ա. Տ Ի Ա Վ Չ Չ Ի Օ — ՏԵՐ ***

Սան Պէնիթօ փողոց, Այի մօտ: Ֆրէզնօ, Քալիֆ.

Ս Ա ՇՈՒԱՅՉԸՐ,

ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՑՆԵՐ, ԵԻՆ.

Ամեն տեսակ Նորուգումներ կըլան փութով:

1920 Մարիփոզա Ըսթրիթ, Ֆրէզնօ:

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ

Մեծաքանակ վաճառականք Նախայի, Արմավայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ

Բիւսթիզի ապահով դեղ ճանչցուած ՈՒԻԹԸՆԻ ՍԷՏԻՍԻՆԱ ջուրերուն: — Թէլէֆօն, Ուայթ 817:—

Քարոյ Եղբայրներ

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկարեն ընդունիլ Հայ այգեպաններու արտադրած պտուղներն և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոհ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

J. K. ELLEZIAN

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Նպարեղէններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքիսկի փավաղրի, ձիթաւիղի ևն.

1145 ԱՅ փողոց — Ֆրէզնօ — Թէլէֆօն Պլաք 773

Պարքիօք Ըսքէյարս,

Էլ և Ֆրէզնօ փողոցներ, Պարտիզին գիւմարցը Թէլէֆօն, մէյն 174 — — — — Ֆրէզնօ Վարձու կառքեր. ճամբորդներու ձիերուն հողատարու թիւն: Գնել և ծախել: Բոլոր գիշերը բաց ենք:

ԳՆԱ ԱՌ

ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵԱՅ ՐԱՆՉԵՐՈՒ, ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՖՈՆ
ՖՐԷԶՆՕ, ՔԱԼ Էքսչէնջ — ԹԻ 2

Ձեր Ապահովագրութեան համար դիմեցէք առ

Պ. Ֆ. Շեփհրրտ և շ Ընկ.

1123 ձէՑ Ըսթրիթ

Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կտանան:

Ձեր ԱՏԱԽՉՆԵՐԸ ԳՆԵՅԷՔ

Ա. Ա. ՓԻՐՍ

ԱՏԱԽՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷԶՆՕ ՔԱԼ.

ՏՔՔ. Յ. Հ. Բարսեղեան

ՖՐԷԶՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ Սենեակ 16 17, Թէլէֆօն Պլաք 492. Ֆրէզնօ Քալ.

Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

Ընտրութիւն. Նոյ. 4, 1902

Փրպիք Ատմինըսթրէյթրի համար

Բ. Տ. Զիթրընտրն

Ռամկավարական կանոնաւոր ընտրելի:

Հոնրապետական կանոնաւոր ընտրելի

Բ. Ն. Պարթիպի

Քալիթի Բիքօրտրի համար

ԼՏՔԹ. ԱՆՃԸՍ Պ. ՔՕՎԱՆ

ՔՕՐՕՆԸՐԻ ՀԱՄԱՐ

Ռամկավարականներու կանոնաւոր ընտրելի:

Գաւառական Գանձապետի (Քալիթի Թրէժըրը) համար

Ս. Ս. ՄԱՐՇՐԼԻ

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի

Ճ Օ Ն Վ. Կ Ի Է Ր Շ Ա Ր Տ.

Հանրապետական Ընտրելի ՇԷՐԻՖԻ համար
Ձեր օգնութիւնը կը խնդրուի յարգանքով:

Ընդհանուր Գատախաղի համար

Ճ. Վ. ՃՕՆՍ

Հասարակապետական Ընտրելին

Թաքս Քօլլէքթըրի համար

Ա. Հ. Կրիի

Կանոնաւոր Հասարակապետական Ընտրելի.

60րդ Երեսփոխանական Նահանգաբաժնէն Երեսփոխանի համար.

Ճ. Օ. Թրէյար

Կանոնաւոր Հասարակապետական Ընտրելի:

Կանոնաւոր Ռամկավարական ընտրելի

Ճ. Վ. Բալիթի

Երրորդ քաղաքաբաժնի համար (Ֆրէզնօ) արդարութեան դատաւոր (ձըսթիս օֆ տը Փիս):

Ֆրէզնոյի գաւառական Օտիթրի համար

Փօլ Հրնչ,

Ռամկավարական կանոնաւոր ընտրելի:

Երրորդ քաղաքաբաժնի Արդարութեան դատաւորի (ձըսթիս օֆ տը Փիս) համար:

Ճօն Ճօնսէն Որդի,

Հանրավարական կանոնաւոր ընտրելի:

Քօրօնրի համար

ՏՔՔ. Վ. Թ. Պրրքս,

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի